

Կրթության ոլորտի կառավարման կազմակերպական կառուցվածքի արդիականացման հնարավորությունները՝ կրթության տեղեկատվայնացման համատեքստում

Հովհաննիսյան Ա. Ռ.

տ.գ.թ., դոցենտ, ՀՊՏՀ, Կառավարման ամբիոն (Երևան, Հայաստան)
arevik_hovhanissian@yahoo.fr

Քոչարյան Մ. Ռ.

տ.գ.թ., սախտենտ, ՀՊՏՀ, Կառավարման ամբիոն (Երևան, Հայաստան)
marianakocharyan@mail.ru

Քանակի բառեր՝ կրթության ոլորտ, տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաներ, կառավարման կազմակերպական կառուցվածք, կրթության տեղեկատվայնացում, արդիականացում:

Возможности модернизации организационной структуры в области образования в контексте информатизации образования

Ованнесян А. Р.

доцент, кандидат экономических наук, АГЭУ (Ереван, Армения)
arevik_hovhanissian@yahoo.fr

Кочарян М. Р.

асистент, кандидат экономических наук, АГЭУ (Ереван, Армения)
marianakocharyan@mail.ru

Аннотация. Информационные и телекоммуникационные технологии вошли в разные области экономики и не возможно не применять их в сфере образования, которая постоянно находится в центре внимания государственных органов и исследователей. Этим и обусловлено изучение теоретико-методических проблем управления и внедрения ИКТ в сферу образования, и выявление возможностей модернизации организационной структуры управления сферы образования.

Ключевые слова: сфера образования, информационные и телекоммуникационные технологии, организационная структура управления, информатизация образования, модернизация.

Opportunities for Modernization of Organizational Structure of Management of the Sphere of Education in the Context of Education Information

Hovhannisyanyan A. R.

PhD in Economics, Associate Professor, ASUE (Yerevan, Armenia)
arevik_hovhanissian@yahoo.fr

Kocharyan M. R.

PhD in Economics, Assistant Professor, ASUE (Yerevan, Armenia)
marianakocharyan@mail.ru

Abstract. The sphere of education has always been in the spotlight of researchers and public authorities, and as presently, information and telecommunication technologies have entered into different sectors of the economy, their application has become inevitable in education as well. Thus, it is important to study the methodological issues of introduction and application of information and telecommunication technologies and to discover the opportunities for modernization of organizational structure of management of the sphere of education.

Keywords: sphere of education, information and telecommunication technologies, organizational structure of management, education informatization, modernization.


Կրթության ոլորտն ուրույն և կարևոր դեր ունի ինչպես ամբողջ աշխարհի, այնպես էլ ՀՀ տնտեսության համար: Ելնելով վերոնշյալից՝ կրթության ոլորտը մշտապես հետազոտողների և պետական կառավարման մարմինների ուշադրության կենտրոնում է, և քանի որ ներկայումս տեղեկատվական և հեռահաղորդակցական

տեխնոլոգիաները մուտք են գործել տնտեսության տարբեր ոլորտներ, անխուսափելի է դարձել դրանց կիրառմամբ կրթական գործունեության իրականացումը: Հենց դրանով է պայմանավորված կրթության ոլորտում ՏՀՏ ներդրման և կառավարման տեսամեթոդական հիմնախնդիրների ուսումնասիրությունն ու

կրթության ոլորտի կառավարման կազմակերպական կառուցվածքի արդականացման հնարավորությունների բացահայտումը:

Այսպես՝ նշենք, որ ՀՀ-ում մինչև 1992 թ. կրթության ոլորտի կարգավորմամբ զբաղվում էր Բարձրագույն կրթության և գիտության պետական կոմիտեն, որը 1992 թ. վերակազմակերպվեց որպես ՀՀ բարձրագույն կրթության և գիտության նախարարություն: Իսկ արդեն 1995 թ. ՀՀ նախագահի «ՀՀ կառավարության կառուցվածքը և գործունեության կարգը սահմանելու մասին» [1] հրամանագրի և ՀՀ կառավարության «ՀՀ կառավարության կառուցվածքի մեջ չընդգրկված պետական կառավարման հանրապետական մարմինների լուծարման և

վերակառուցման գործընթացի իրականացմանն ուղղված միջոցառումների մասին» [2] որոշման համաձայն՝ դադարեցվեց ՀՀ բարձրագույն կրթության և գիտության և ՀՀ լուսավորության նախարարությունների գործունեությունը՝ նրանց միաձուլման կապակցությամբ՝ իրավահաջորդ ճանաչելով ՀՀ կրթության և գիտության նախարարությունը [5]: Այսպիսով՝ 1995 թ. կրթության ոլորտի կարգավարումն իրականացնում է ՀՀ կրթության և գիտության, իսկ արդեն 2019 թ. հունիսից ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, որի կառավարման կազմակերպական կառուցվածքում առանձնացվում են հետևյալ կառուցվածքային ստորաբաժանումները (գծապատկեր 1).



Գծապատկեր 1. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կառուցվածքային ստորաբաժանումները [4]

Նշենք, որ ներկայացված ՀՀ ԿԳՄՄՆ կառավարման կազմակերպական կառուցվածքում ընդգրկված են համակարգի հետևյալ կառույցները.

- Կրթության ազգային ինստիտուտ (ԿԱԻ),
- Կրթական ծրագրերի կենտրոն (ԿԾԿ),
- Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոն (ԱՓՇԱՏԿ),
- Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն (ԿՏԱԿ)
- «Կրթություն» թերթի խմբագրություն:

Ինչպես երևում է վերը նշվածից, ՀՀ կրթության ոլորտի կառավարումն իրականաց-

նող նախարարության կազմում ընդգրկված կառույցներից է «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» (ԿՏԱԿ) պետական ոչ առևտրային կազմակերպությունը, որն էլ կրթական գործընթացում ՏՀՏ ներդրման ու կառավարման գործառույթների պատասխանատուն է: ԿՏԱԿ-ի գործունեության հիմքում Հայաստանի Հանրապետության հանրակրթական դպրոցներում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ներդրումն ու դրա շարունակականության ապահովումն է:

Կազմակերպությունն իր նպատակներն իրագործում է հետևյալ բաժինների միջոցով.

1. Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) բովանդակության և հեռավար ուսուցման բաժին (իրականացնում է հետևյալ աշխատանքները՝ ա) «Հայկական կրթական միջավայր» [6] պորտալի և դրա ենթակայքերի շահագործում, ԿՏԱԿ-ի և այլ կրթական կայքերի վարում, բ) կրթության ոլորտում ՏՀՏ բնագավառի ծրագրեր իրականացնող կազմակերպությունների գործունեության ուսումնասիրություն, գործընկերային կապերի հաստատում և այդ ծրագրերի համակարգում, գ) հեռավար դասընթացների ստեղծում, մշակում և վարում, դ) շարժական ինտերնետային-համակարգչային կայանի շահագործում):
2. Կրթության տեղեկատվավերլուծական բաժին. ա) հանրակրթական ուսումնական հաստատությունների գործունեության մասին վիճակագրական տվյալների հավաքում, մշակում, վերլուծություն, հրատարակում, բ) հանրակրթական և բարձրագույն ուսումնական հաստատությունների վարկանշավորում, գ) հանրակրթական ուսումնական հաստատություններում ՏՀՏ համալրվածության ուսումնասիրություն և ՏՀՏ կիրառման հետազոտություն):
3. Հայաստանի կրթական ցանցի կառավարման և ծրագրային ապահովման բաժին (ա) Հայաստանի կրթական ցանցի (ՀԿՑ) սպասարկում, բ) կրթական համակարգում օգտագործվող «Մայքրոսոֆթ» ընկերության համակարգչային ծրագրերի արտոնագրման գործընթացի կազմակերպում):
4. Շարժական ինտերնետային համակարգչային կայան:

Այսպիսով՝ ինչպես երևում է վերոնշյալից, ԿՏԱԿ-ի գործունեության շրջանակն ընդգրկում է ՀՀ հանրակրթական դպրոցները, և, որքան էլ զարմանալի է, ՀՀ ԿԳՆ համակարգում մասնագիտական կրթության ոլորտում ՏՀՏ ներդրման և կառավարման հարցերով զբաղվող առանձնացված մարմին չկա:

ԿԳՆ համակարգի կառույցներից է «Կրթական ծրագրերի կենտրոն» ծրագրերի իրականացման գրասենյակը, որի հիմնական նպատակը ՀՀ կրթության ոլորտում որակի, համապատասխանության, հասանելիության և արդյունավետության բարելավմանն ուղղված ծրագրերի իրագործումն է: Այս ԾԻԳ-ը հիմնադրվել է 1996 թ. հոկտեմբերի 11-ին ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանով և այս ընթացքում իրականացրել է 2 վարկային ծրագրեր [7]:

Այսպիսով՝ ինչպես երևում է ՀՀ ԿԳՆ կառավարման կազմակերպական կառուցվածքի վերլուծությունից, տվյալ ոլորտում ՏՀՏ

ներդրման և կիրառման գործառնությունների իրականացումը վերապահված է նախարարության համակարգի համապատասխան կառույցներին: Վերջիններիս գործունեությունը վերաբերում է հանրակրթության ոլորտին, այն է՝ որոշակի ծրագրերի իրականացման շրջանակում: Ուստի կարող ենք ասել, որ ՀՀ-ում առկա են կրթության տեղեկատվայնացման գործընթացի համակարգման որոշ նախապայմաններ, որոնք, սակայն, վերաբերում են հանրակրթությունը: Անդրադառնալով «կրթության տեղեկատվայնացում» եզրույթին, նշենք, որ «տեղեկատվայնացում» հասկացության լայն սահմանումն առաջին անգամ տրվել է ակադեմիկոս Ա.Պ. Երշովի աշխատանքներում, մասնավորապես ըստ վերջինիս, «տեղեկատվայնացումը միջոցառումների համալիր է, որն ուղղված է հավաստի, սպառիչ և արդիական գիտելիքների լիարժեք օգտագործման ապահովմանը մարդկանց գործունեության բոլոր ոլորտներում» [9, էջ 14]:

Իսկ պրոֆեսոր Ս.Գ.Գրիգորևը և Վ.Վ.Գրինշկունը նշում են, որ կրթության տեղեկատվայնացումն իրենից ներկայացնում է մարդու գիտագործնական գործունեության ոլորտ, որն ուղղված է տեղեկատվության հավաքման, պահպանման, մշակման և տարածման մեթոդների ու միջոցների կիրառմանը, առկա և ձևավորվող նոր գիտելիքների համակարգմանը՝ կրթության և դաստիարակության հոգեբանական-մանկավարժական նպատակներին հասնելու շրջանակներում [8, էջ 14]:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մասնագիտական ուսումնական հաստատություններն ինքնուրույն են, և այստեղ պետական կարգավորումը գրեթե բացակայում է, ՏՀՏ կիրառման խնդիրները շարունակում են մնալ արդիական ու հրատապ: Առկա բոլոր խնդիրների լուծումը պահանջում է Էսկան պետական միջամտություն, քանի որ ՀՀ-ի համար շատ կարևոր է կրթության՝ որպես տնտեսության կարևոր հատվածի, կայունացման և զարգացման ծրագրերի մշակումը, դրանց փոխադարձ կապերը և համապատասխանությունը պետական քաղաքականությանը:

Ինչ վերաբերում է ՏՏ ոլորտի պետական կարգավորմանը, պետք է նշել, որ դա իրականացնում է ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը, որի կառավարման կազմակերպական կառուցվածքում առանձնակի ուշադրության է արժանի հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներից՝ Բարձր տեխնոլոգիաների վարչությունը և Գիտատեխնիկական վարչությունը [3], որոնց գործունեության վերլուծությունից պարզ է դառնում, որ ՀՀ-ում տեղեկատվական հասարակության ձևավորման և

կայացման խնդիրներով զբաղվում է նախարարությունը, մասնավորապես՝ վերջինիս վարչություններից երկուսը, որոնց գործառույթները դեռևս թերի են և չեն արտացոլում տեղեկատվայինացման գործընթացի ողջ բովանդակությունն այն առումով, որ հասարակության տեղեկատվայնացումը և տեղեկատվական հասարակության կայացումը մեծապես պայմանավորված են կրթության տեղեկատվայնացման գործընթացով:


Ելնելով խնդրի կարևորությունից և հրատապությունից՝ ՏՀՏ կիրառմամբ կրթության արդյունավետության բարձրացման ու ոլորտի հետագա զարգացման պետական քաղաքականությունը խթանելու նկատառումներով առաջարկում ենք ՀՀ ԿԳՄՄՆ կազմում ստեղծել Կրթության տեխնիկական արդիականացման վարչություն՝ համակարգի կառույցների փոխարեն: Այս ստորաբաժանումն իր գործունեության ընթացքում կառաջնորդվի ՀՀ սահմանադրության ու օրենսդրահիրավական դրույթներով և իր գործունեությունը պետք է նպատակաուղղի կրթության ոլորտում ՏՀՏ արդյունավետ կառավարման գործընթացում պետական քաղաքականության իրագործմանը, կրթության տեղեկա-

տվայնացման հայեցակարգի ընդունմանն ու դրա իրականացման ընթացքի վերահսկողությանը: Առաջարկվող ստորաբաժանման պարագայում կրթության կառավարման կազմակերպական կառուցվածքը ներկայացված է գծապատկեր 2-ում:

Այսպիսով՝ նշված ստորաբաժանումն, իր երեք բաժինով, համապատասխան իրավասությունների, ֆինանսավորման և ինքնուրույնության պայմաններում, կարող է լուծել ոլորտի առջև ծառայած խնդիրները, մասնավորապես՝ կատարել կրթության տեխնոլոգիական արդիականացում և նորարարությունների ներդրում կրթության տեղեկատվայնացման ազգային հայեցակարգի շրջանակներում:

Ընդ որում, նախատեսվող վարչությունն իր գործառույթները պետք է իրականացնի հետևյալ կառույցների միջոցով.

1. կրթական նոր տեխնոլոգիաների զարգացման և նորարարական ծրագրերի բաժին,
2. կրթության տեղեկատվավերլուծական բաժին,
3. մոնիտորինգի և վերահսկողության բաժին:



Գծապատկեր 2. ՀՀ ԿԳՄՄՆ կառավարման կազմակերպական առաջարկվող կառուցվածքը (Գծապատկերը կազմվել է հեղինակների կողմից)

- ✓ Վարչության գործառույթներից կլինեն.
- ✓ կրթական հաստատությունների նյութատեխնիկական բազայի հաշվառումը, վիճակագրական տվյալների հավաքագրումը, վերլուծությունը և հրապարակումը,
- ✓ ուսումնական հաստատությունների վարկանշավորումը, ՏՀՏ համալրվածության ուսումնասիրությունը և ՏՀՏ կիրառման հետազոտումը,

- ✓ ուսումնական հաստատությունների կողմից կրթական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաների շահագործման վերահսկողությունը,
- ✓ նյութատեխնիկական բազայի զարգացման հեռանկարային պլանավորումը,
- ✓ ՏՀՏ կիրառմամբ կրթական ծրագրերի մշակումը և դրանց իրագործման վերահսկողությունը,

- ✓ կրթական գործընթացում SՀS կիրառման նորարարական ծրագրերի մշակում,
 - ✓ կրթության հասանելիությանն ուղղված միջոցառումների ձեռնարկումը,
 - ✓ հեռավար կրթության ազգային միասնական համակարգի ստեղծումը և դրա գործունեության վերահսկողությունը և այլն:
- Վերոնշյալ գործառնություններն իրականացնելու համար ներկայացված վարչությանը անհրաժեշտ է տալ մի շարք լիազորություններ, մասնավորապես՝
- իր իրավասություններին առնչվող հարցերի վերաբերյալ որոշումների ընդունման համար սահմանված կարգով պահանջել և ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն,
 - իրավաբանական և ֆիզիկական անձանց տրամադրել պարզաբանումներ իր իրավասություններին առնչվող հարցերի վերաբերյալ,
 - ներգրավվել գիտական կազմակերպությունների, հետազոտողների և մասնագետների՝ վարչությանն առնչվող հարցերի քննարկումներում,
 - ստեղծել կրթության ոլորտի համակարգող խորհրդատվական և փորձագիտական, այդ թվում՝ միջգերատեսչական մարմիններ և այլն:

Կարծում ենք՝ կրթության կառավարման ներկայացված մոդելի ներդրման արդյունքում կրթական գործընթացի տեղեկատվայնացումը հնարավոր կլինի իրականացնել ավելի արդյունավետ, ինչի հետևանքով տեղի կունենա կրթության ձևերի և կրթական ծրագրերի միջև ներքին սերտ կապի, կրթության շարունակականության, ապա ուսումնական հաստատությունների միասնացման ապահովումը: Նախակրթարանների միասնացումը հանրակրթական հաստատություններին, հանրակրթական հաստատությունների սերտ կապը մասնագիտական ուսումնական հաստատությունների հետ, բուհերի կողմնորոշումը դեպի հանրակրթական հաստատություններ և այսպես շարունակ. այս ամենի արդյունքում տեղի կունենա կրթության արդյունավետության և որակի բարձրացում, իսկ անընդմեջ կրթության սկզբունքի ներդրմամբ կրթության մի մակարդակից դեպի մյուսն անցումը կկատարվի շատ սահուն կերպով:

Վերը ներկայացվածը, չափազանց արդիական է դարձել ներկայումս՝ կորոնավիրուսի պանդեմիայով պայմանավորված: Բոլորս ականատես եղանք կրթության ոլորտում առկա խնդիրներին՝ պայմանավորված հեռավար ուսուցմամբ: Արդեն տևական ժամանակ է, ինչ բարձրաձայնվում է հեռավար ուսուցման կարևորությունը, և միայն վերջերս ֆորս-մաժորային իրավիճակը ստիպեց ավելի սթափ գնահատել իրավիճակը և դասեր քաղել դրանից:

Մեր կողմից առաջարկվող կառուցվածքում, վարչության գործառնությունները ներառում են այն հիմնախնդիրը, ինչը այժմ առկա է՝ շտապ անցնել հեռավար ուսուցման, երբեմն անգամ, չունենալով համապատասխան մասնագիտական պատրաստվածություն:

Եվ իսկապես, կրթության ոլորտում SՀS կիրառումը հնարավորություն տվեց ուսումնառողներին և դասավանդողներին աշխատելու սկզբունքորեն նոր մեթոդներով: Մասնավորապես, ուսումնառողներն առանց տնից դուրս գալու, կարողացան մասնակից լինել տարբեր գիտնականների և մասնագետների կողմից վարվող դասախոսություններին: Իրողություն դարձավ Նոամի այն միտքը, որ (Noam, 1995) «Նախկինում մարդիկ գիտելիքի հետևից գնում էին համալսարան: Ապագայում գիտելիքներն են գալու մարդկանց մոտ, որտեղ էլ որ նրանք լինեն» [10, էջ 14]:

Իրավիճակը ստիպեց խորհել կրթության ոլորտի բոլոր մակարդակներում մասնագիտական անհրաժեշտ վերապատրաստումների իրականացման մասին: Ինչ խոսք, թե՛ հանրակրթական, թե՛ բուհական հաստատություններում, դասավանդողների մի ստվար հատված կարողացավ արձագանքել ՀՀ-ում ստեղծված իրավիճակին և անցում կատարեց հեռավար կրթական համակարգի, սակայն բոլոր նրանց համար, ովքեր միջին տարիքային հասակից բարձր են, այդ անցումը շոկային եղավ և գրեթե, ոչ իրատեսական՝ աշխատանքների կատարման առումով: Նույն շեշտադրումը կարող ենք տանել նաև ուսումնառողների հետ կապված, չնայած այն հանգամանքին, որ նրանք երիտասարդ են, ավելի ճկուն և փոփոխություններին առավել արագ հարմարվող, բայց այստեղ ևս կան մարդիկ, ում համար չափից դուրս դժվար է կրթական գործընթացում տեղեկատվական տեխնոլոգիաների նորարարություններին հարմարվելը: Էլ չենք էլ անդրադառնում այն փասին, որ շատերն անգամ չունեն համակարգիչներ, բնականաբար հեռավար ուսուցումը նրանց համար դառնում է բաղձալի երազանք, սա էլ խնդրի մյուս կողմն է:

Մեր կողմից ներկայացված հաջորդ կարևոր շեշտադրումը տեղեկատվական տեխնոլոգիաների և կապի ծառայությունների փոխգործակցությունն է, ինչին ականատես ենք լինում ասօր: Մեր կապի ծառայություններ մատուցող ընկերությունները կրթական նորագույն տեխնոլոգիաների համար առաջարկում են անվճար հարթակներ՝ գործընթացը սահուն իրականացնելու համար:

Ամփոփելով, կարող ենք փաստել, որ մեր կողմից առաջարկվող կազմակերպական կառուցվածքը հիմնավոր կերպով ապացուցում է իր արդիականությունը: Այսպիսով, կարևորելով

պետության դերն ու մասնակցությունը կրթության ոլորտում ՏՀՏ ներդրման և դրանց արդյունավետ կառավարման, ինչպես նաև ոլորտի զարգացման գործում, համոզմունք

ունենք, որ կրթության ոլորտի կառավարման առաջարկվող համակարգը թույլ կտա ապահովել շոշափելի արդյունքներ:

Օգտագործված գրականության ցանկ

1. «ՀՀ կառավարության կառուցվածքը և գործունեության կարգը սահմանելու մասին» ՀՀ նախագահի հրամանագիր՝ ընդունված 25.07.1995 թ.:
2. «ՀՀ կառավարության կառուցվածքի մեջ չընդգրկված պետական կառավարման հանրապետական մարմինների լուծարման և վերակառուցման գործընթացի իրականացմանն ուղղված միջոցառումների մասին» ՀՀ կառավարության որոշում՝ ընդունված 04.08.1995 թ.:
3. ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության պաշտոնական էլ. կայք՝ https://hti.am/main.php?lang=1&page_id=487#:
4. ՀՀ ԿԳՄՄՆ պաշտոնական կայք՝ <http://edu.am/index.php/am/about/view/74>
5. ՀՀ ԿԳՄՄՆ պաշտոնական կայք՝ <http://edu.am/index.php/am/about/view/146>:
6. Հայաստանի դպրոցների ինտերնետային համալիր էջը՝ «Կրթական համալիր էջ» պորտալ՝ <https://www.amedu.am/>:
7. ՀՀ կրթական ծրագրերի կենտրոն ԾԻԳ պաշտոնական կայք՝ <http://www.cfep.am/hy/history/>:
8. Григорьев С. Г., Информатизация образования. Фундаментальные основы [Текст] / С.Г.Григорьев, В.В. Гриншкун. М., 2005.
9. Ершов А. П., Ученый и человек. Отв. ред. А.Г. Марчук. Новосибирск, 2006.
10. Информационные и коммуникационные технологии в дистанционном образовании, Специализированный учебный курс, под редакцией М. Г. Мура, Институт ЮНЕСКО по информационным образованиям, М., 2006.

Сдана/Հանձնվել է՝ 09.11.2020
Рецензирована/Գրախոսվել է՝ 13.11.2020
Принята/Ընդունվել է՝ 26.11.2020